ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏՈՐՈՆՏՈՅԱԲՆԱԿ ԱՆԴՐԵ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ԱՆՏՐԷ ՆԱԶԱՐԵԱՆԻՆ* ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ. Ի ԳԱՆԱՏԱ

Խորապէս հրճուեցանք երբ իմացանք Գանատայի Հայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանէն Ձեր ջերմ սիրոյն և ամբողջական նուիրաբերումին մասին՝ հանդէպ մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ և հայեցի դաստիարակութեան ու Հայ մշակոյթին:

Ձեր այդ սիրոյն վերջին գործնական և պերճախօս վկայութիւնը եղաւ Ձեր իշխանական նուիրատուութիւնը, որով «Անտրէ և Սեզա Նազարեան» անուամբ մնայուն հիմնադրամ մը հաստատեցիք Գանատայի Հայոց Թեմի հովանաւորութեան և տնօրինութեան ներքև, որուն տարեկան եկամուտը պիտի յատկացուի հայ համալսարանական ուսանողներու և Առաջնորդարանի կարիքներուն:

Բարձրօրէն գնահատելի կը գտնենք Ձեր ազգասէր և եկեղեցանուէր ոգին, որով Դուք շարունակական բարիքի աղբիւր մը բացիք Ազգ. Առաջնորդարանի մէջ՝ յօգուտ և ի վայելումն մեր ժողովուրդի զաւակներուն:

Ի գնահատութիւն Ձեր այս աստուածահաճոյ և ազգաշէն բարերարութեան՝ Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարձրագոյն կարգի շքանշանը՝

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ:

Կաղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Ձեզի, Ձեր նուիրեալ Տիկնոջ՝ Սեզային և ընտանիքի բոլոր անդամներուն պարգևէ երկար օրեր քաջառողջութեան, գործոց յաջողութեան և երջանկութեան բարիքներով առլցուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6 Դեկտեմբերի
Ցամի Տեառն 1998 և ի Թուին Հայոց ՌՆԽԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/205